ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

« 18 » հունիսի 2018 թ. N 119-Ա
ք.Գավառ

ՍԵՐԺԻԿ ԳԱԼՍՏՅԱՆԻՆ
ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ, 161-րդ, 164-րդ, 169-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002թ. սեպտեմբերի 19-ի N 1797-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կանոնադրության 15-րդ կետը ու Սերժիկ Գալստյանի դիմումը՝

Կարգադրում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ներքին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Սերժիկ Գալստյանին տրամադրել 2018 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդի չօգտագործած մասը՝ 2018 թվականի հունիսի 25-ից մինչև հուլիսի 6-ը ներառյալ:
2. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ներքին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունները ժամանակավորապես դնել «Ներքին Գետաշենի բժշկական ամբուլատորիա» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ Անի Գրիգորյանի վրա:
3. Աշխատանքի մեջ համարել 2018 թվականի հուլիսի 9-ին:
4. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԵԼՅԱՆ